

3. Աւետիս կաթողիկոս Երուսաղէմէն վերադարձաւ 1613ի վերջերը. իսկ Հայաստանէն անցաւ Վրաստան 1620ին, ուր եւ վախճանեցաւ: Իր պատահումն Մխլըյին յԵրեւան կ'իյնայ 1614—1619 տարիներուն:

4. Մարախի սարսափը, որ 1615—1621 տարիներուն կը ճարակէր, Երեւանի նահանգին մէջ յատկապէս 1618ին, կը թելադրէ Մեխլուի երեւումը 1617—1618 տարիներու մէջ զետեղել¹⁰:

11. ՄՈՎՍԷՍ՝ ՔԱՐՈՉԻՉ

Վերին Հայաստան, ուր պիտի ըլլար Մովսէս վարդապետի առաքելական գործունէութեան ասպարէզը, բազմօք խախտած էին հին կարգերը. լուծ էր աւետարանական քարոզութիւնը. վանքերը ամայացած էին, եկեղեցիները շատ տեղեր լքուած. եկեղեցականութիւնը զուրկ էր պատշաճաւոր կրթութենէ եւ կ'ապրէր սանձարձակ. մուտ գտած էին ժողովրդեան մէջ ալ եկեղեցական կանոններու հակառակ զեղծումներ: Առաքել Դաւրիթեցի լալով կը նկարագրէ երկրին եւ եկեղեցւոյ տխուր պայմանները: Բաւական է

¹⁰ Թ. Աւդալրէզեան, Անյայտ պղանդաւորներ Հայոց մէջ ժՁ. ու ժԷ. դարերում, Վիեննա 1926, էջ 4—23. մանր վերլուծման ենթարկելով Մեխլուի երեւումը, ժամանակի մասին կը դրէ. «Մեխլուի ասպարէզ գալն ընկնում է ժՁ. դարի վերջին քառորդում ու ժԷ.ի առաջին տասնեակներում» (էջ 23):